## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ – 2025

ՄԱՐԶ ------------------------------------------------------------------------------

ՔԱՂԱՔ/ԳՅՈՒՂ ------------------------------------------------------------------

ԴՊՐՈՑ ----------------------------------------------------------------------------

ԴԱՍԱՐԱՆ ------------------------------------------------------------------------

ԱԶԳԱՆՈՒՆ ---------------------------------------------------------------------

ԱՆՈՒՆ ---------------------------------------------------------------------------

ՀԱՅՐԱՆՈՒՆ --------------------------------------------------------------------

ՀԵՌԱԽՈՍԻ ՀԱՄԱՐ ----------------------------------------------------------

## Աշխարհագրություն – 2025

## II փուլ

## Պատասխանների թերթիկ

| Հարց | Պատասխան | Հարց | Պատասխան |
|---|---|---|---|
| **1.** | 2 | **13.** | 3 |
| **2.** | 2 | **14.** | 2 |
| **3.** | 4 | **15.** | 4 |
| **4.** | 3 | **16.** | 2 |
| **5.** | 2 | **17.** | 3 |
| **6.** | 4 | **18.** | 4 |
| **7.** | ա) 6 մ$^3$/վրկ բ) 43200 մ$^3$ | **19.** | 3 |
| **8.** | ա) 2900 բ) 122 900 | **20.** | 4 |
| **9.** | 2, 6, 7, 8 | **21.** | 2, 3, 6, 7 |
| **10.** | 1, 4, 7, 8 | **22.** | 1, 4, 5, 8 |
| **11.** | 3 | **23.** | 4231 |
| **12.** | 1 | **24.** | 4312 |
| **25.** | 1. ճիշտ է 4. սխալ է<br>2. ճիշտ է 5. ճիշտ է<br>3. սխալ է 6. սխալ է | **26.** | 1. սխալ է 4. ճիշտ է<br>2. ճիշտ է 5. սխալ է<br>3. ճիշտ է 6. սխալ է |

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
**Դպրոցական օլիմպիադա – 2025թ.**
**Աշխարհագրություն – II փուլ**
**Տևողությունը՝ 120 րոպե**
**Գնահատման քայլը՝ 0,25 և 0,5 միավոր**

**Առաջադրանքներ**

**1. Ո՞ր պնդումն է ճիշտ……………………………………………………..…………………………..0,5 միավոր**
1) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:
2) Միջերկրածովային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
3) Մուսսոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
4) Հասարակածային գոտու գետերը հորդանում են ամռանը:

**2. Ո՞ր պնդումն է սխալ........................................................……..…………………………...................0,5**
1) Թեթև և սննդի արդյունաբերությունը թողարկում է հիմնականում սպառման արտադրանք:
2) Թեթև և սննդի արդյունաբերությունը տնտեսության նորագույն ճյուղերն են:
3) Համաշխարհային թեթև և սննդի արդունաբերության հումքային հիմնական բազան գյուղատնտեսությունն է:
4) Թեթև և սննդի արդյունաբերության տեղաբաշխումը համատարած է, քանի որ բոլոր երկրներում էլ կա:

**3. Ի՞նչ գազ է արտազատվում լուսասինթեզի ժամանակ.....……………………………………….………….. 0,5**
1) ազոտ 2) օզոն 3) ածխաթթու գազ 4) թթվածին

**4. Ո՞ր մշակաբույսի աճեցմամբ է Իտալիան աշխարհում առաջատար…………………………….…..…0,5**
1) ցորենի 2) սուրճի 3) խաղողի 4) կակաոյի

**5. Հարավային Ամերիկայի արևմտյան ափերով ո՞ր ծովային հոսանքն է անցնում ……………….….….0,5**
1) Բրազիլական 2) Պերուական 3) Ֆոլկլենդյան 4) Գվիանական

**6. Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում չեն ………………………………………..………....0,5**
1) Կուբան և ՈՒրուգվայը 3) Կոլումբիան և Պերուն
2) Արգենտինան և Չիլին 4) Կանադան և Շվեդիան

**7. Գետի լայնությունը 6 մետր է, միջին խորությունը՝ 50սմ, ջրի արագությունը՝ 2,0 մ/վրկ: Որոշել………………………………………………………………………...………………………….…2,0**
ա) գետի ծախսը բ) գետի հոսքը 2 ժամում

**8. Երկրի բնակչության թիվը 120 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰ : Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1700 մարդ, իսկ արտագաղթը՝ 600 մարդ: Որոշել………………………………..2,0**
ա) բնակչության բացարձակ աճը բ) բնակչության թիվը 1 տարի հետո

**9. Գրել այն մշակաբույսերի համարները, որոնք հացահատիկային են…………...….……….……...….1,0**
1) սուրճ 2) գարի 3) շաքարեղեգն 4) արևածաղիկ
5) սոյա 6) վարսակ 7) բրինձ 8) եգիպտացորեն

**10. Գրել այն հրաբուխների համարները, որոնք գտնվում են խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալում……………………..........................…………………………………………….…..…1,0**
1) Ֆուձիյամա 2) Կամերուն 3) Նեմրութ 4) Օրիսաբա
5) Դեմավենդ 6) Հեկլա 7) Ռուիս 8) Կրակատաու

11. Հայկական պար լեռնաշղթայի վրա է……………………………………………………………………0,5
1) Կապուտան լիճը 2) Պարզ լիճը 3) Գայլատու լիճը 4) Ծովք լիճը

12. ՀՀ ո՞ր բնակավայրը առողջարանային չէ……………………………………………………………………0,5
1) Ագարակը 2) Ջերմուկը 3) Արզնին 4) Դիլիջանը

13. Էլեկտրակայանների տեսակներից ո՞րն է ամենաշատն աղտոտում մթնոլորտը……………………………0,5
1) ջրային 2) արևային 3) ջերմային 4) հողմային

14. Ո՞ն զոնայում են ապրում փիղը և ընձուղտը……………………………………………………………0,5
1) տափաստան 2) սավաննա 3) խառն անտառ 4) անապատ

15. ԱՍԵԱՆ-ի անդամ երկրներ են……………………………………………………………………………0,5
1) Չինաստանը և Վրաստանը
2) Ավստրալիան և Թուրքիան
3) Ռուսաստանը և Ճապոնիան
4) Ինդոնեզիան և Սինգապուրը

16. Մերձալպյան և ալպյան մարգագետիններում մեծ տարածում ունեն ……………………………………0,5
1) փետրախոտը, սիզախոտը, կորնգանը
2) երեքնուկը, անմոռուկը, գայլաթաթը
3) մասրենին, գազը, աբեղախոտը
4) օշինդրը, ուղտափուշը, աղածաղիկը

17. Ո՞ր տարածաշրջաններում է տարածվում անազի գոտին…………………………………………………0,5
1) Հյուսիսային և Հարավային Եվրոպա
2) Լատինական և Հյուսիսային Ամերիկա
3) Հարավարևելյան և Հարավային Ասիա
4) Հարավային և Արևելյան Աֆրիկա

18. Արեգակի շուրջ պտտվելիս Երկիրը մերձակետում լինում է……………………………………………0,5
1) հուլիսի 5-ին 2) մարտի 21-ին 3) հունիսի 22-ին 4) հունվարի 3-ին

19. Բնակչության թվով գերխոշոր երկիր է……………………………………………………………………0,5
1) Պերուն 2) Ավստրալիան 3) Պակիստանը 4) Թուրքիան

20. Ի՞նչ ծագման ապարներ են պեմզան և պեռլիտը………………………………………………………0,5
1) փոխակերպային
2) օրգանական նստվածքային
3) անօրգանական նստվածքային
4) հրային

21. Տրված են ծովային հոսանքներ: Դուրս գրել Ատլանտյան օվկիանոսի
ծովային հոսանքների համարները……………………………………………………………………………1,0
1) Ալյասկայի 2) Գվիանական 3) Գվինեական 4) Կուրո Սիո
5) Սոմալիի 6) Բենգելյան 7) Ֆոլկլենդյան 8) Մոզամբիկի

22. Դուրս գրել այն լեզվախմբի համարները, որոնք չեն մտնում
հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ……………………………………………………………………1,0
1) սեմական 2) հայկական 3) ռոմանական 4) թյուրքական
5) քարթվելական 6) իրանական 7) գերմանական 8) հունգարական

23. Տրված են տարբեր բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրեր:
Դասավորել դրանք բարձրության նվազման կարգով………………………………………………………0,5
1) ցածրավայր 2) բարձրավայր 3) դաշտավայր 4) սարահարթ

24. ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի
ծավալների աճման կարգով…………………………………………………………………………………0,5
1) Սպանդարյանի 2) Ախուրյանի 3) Կեչուտի 4) Հերհերի

**25. Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որոնք՝ սխալ……………………………………………………………………………………….1,5**

1) Մարզում են գտնվում Հատիս և Արայի լեռ հրաբխային կոները:
2) Թռչնաբուծությունն անասնապահության առաջատար ճյուղերից է:
3) Գորգերի արտադրությամբ հանրապետության առաջատար մարզերից է:
4) Ընդերքն աղքատ է մետաղային օգտակար հանածոներով:
5) Մեքենաշինության առաջատար ճյուղերից էին հաստոցաշինությունը և սարքաշինությունը:
6) Արտաքին հաղորդակցությունն իրականացվում է միայն արևմուտքից արևելք ուղղությամբ:

**26. Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որոնք՝ սխալ……………………………………………………………………………………….1,5**

1) Սննդի արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի բազայի վրա:
2) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը:
3) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի և ցեմենտի արտադրությամբ:
4) Հարուստ է ածխի և երկաթաքարի պաշարներով:
5) Մետաղաձուլության կենտրոնները հիմնականում տեղաբաշխված են արևմտյան շրջաններում:
6) Բնակչության ճնշող մեծամասնությունը դավանում է բուդդայականություն: